

## ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏՉԻ ԹԵՄԱՆ ԹԼԿՈՒԹՅԱՆՑՈՒ ՍՏԵՂԾՍԳԻՌՈՒԹՅԱՆ ՄԵԶ

ՎԱՆՈ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Սիրո պայծառ երգիշ Հովհաննես Թլկուրանցին հակասական, երկվական,  
անհատականություն է, որ մի կողմից սեր է երգում, մյուս կողմից՝

Թլկուրանցին զձեզ կաղաքէ,  
թէ կոչ սիրոյ մի՛ տիրանալք,  
որ լըկիք անձառ լուսոյն  
'մ այլ յաստուծոյ լինի ճարլ:

Իրականում այս հակասությունը չի սահմանափակվում միայն սիրո տա-  
ղերի կրոնաբույր վերջաբաններով, այլ տարածվում է Թլկուրանցու՝ կոչ  
մասին ունեցած պատկերացումների և ըմբռնումների վրա; Գեղեցիկ կին  
գովերգող բանաստեղծը մեղ է թողել խրատական և հոգեոր տաղեր, որոնք  
հակասովթյան մեջ են իր սիրերգության հետ:

Առջասարակ, երբ միջնադարում եկեղեցականության հեղինակությունը  
գորավոր էր, երբ քարոզվում էր անցավոր կյանքի ունայնություն, արհամար-  
հանք աշխարհիկ կյանքի նկատմամբ, կինը դասվեց մեղավորների շարքը:  
Միջնադարի բանաստեղծը չի մոռանում, որ մարդը գրախափակվել է  
նվազի պատճառով: Նույն եվան է պատճառը, որ կորուսյալ դրախտը նորից  
գտնելու համար մարդը հարկադրված է հրաժարվել աշխարհային քաղց-  
րություններից: Ուրեմն՝ կինն է ամենամեծ սատանան և պետք է զգուշանալ  
նրանից: Այս զգուշավորությունն է, որ մի յուրօրինակ ձեռվ հանդես է գա-  
լիս միջնադարյան պոեզիայում: Այս շափանիշով է կոչը նայում Առաքել  
Սյունեցին, երբ «Աղամգրում» գրում է.

Դևան զինը շար կամի առնել՝  
կոչ պատճառաւ տայ կատարել:

Կար Եղիշեի «տիկնայք փափկասունքը», բայց կար և նարեկացու հան-  
ճարեղ մտածումը կոչ մասին.

Ուր է մահամատոյց այլագնեայ արձանն Փագովրայ,  
Ուր տգեղն եւ անպանծալին սիդոնացոց իգական ամենանզով ձուլածոյն,  
Ուր կանացի կերպին անգրելին խայտառակութին զազիր տեսակին,  
Որով ամաւթոյ մարգարէն զանաօնաւրէն գիմեցումն անխորաբար...<sup>3</sup>

Այս մտայնությունը այնքան տիրական է, որ հասնում է նաև նոր ժա-  
մանակները, Զարենցի քնարերգության մեջ, իրուն ոճավորում միջնադար-  
յան վերաբերմունքի.

Վա՛յ քեզ, Զարենց, լա՛վ իմացի, խելք թող ժիշտ գլխիք մնա՞  
Ամենասուրբ խոսքը կնկա արյունաքամ դա՛վ է էլի<sup>4</sup>:

1 Հովհաննես Թլկուրանցի. Տաղեր, աշխ. էմ. Պիվազյանի. Երևան, 1960, էջ 162.

2 Առաքել Սյունեցի. Աղամգիրք, աշխ. Ա. Մաղումանի. Երևան, 1989, էջ 7:

3 Գրիգոր Նարեկացի. Մատեան ողբերգութեան. Երևան, 1985, էջ 433.

4 Եղիշե Զարենց. Երկեր լորս հատորով. հ. 1, Երևան, 1986, էջ 221:

Հետաքրիթ մի բան կա այստեղ, եթե հույն փիլիսոփան կանանցից փոքրին է ընտրում՝ իրու շարյաց փոքրագույն, ապա քստ նիշշեի «գառն է անդամ ամենաքաղցր կինը»<sup>5</sup>,

Թէկուրանցին էլ գիտի, որ կինը որքան էլ քաղցր լինի, մի «թունալի օձ» է.

Կինն քաղցրիկ զրուց ունի,  
Թան զօծ քայլէ՝ ու առնու գալար,  
Ջթիւրն թափէ յանկարծակի,  
Որպէս դակնատ բոնէ անճարն,

Կինը անհամար շարիթ է գործում աշխարհի վրա, Ադամին զրկում է դրախտից, պղծում է Դավիթ արքային, ապականում Սոլոմոնին և այդ տեսանկյունից էլ քանիցս զբաղեցնում է Թէկուրանցու միտքը.

Կինն զժովհաննեսն դիմատեաց  
Հերովդիալի պղծոյն համար,  
Որ նա վառեալ էր յանկութեամբ,  
Փութով տարաւ դկամբն ի կատար<sup>7</sup>:

Աստվածաշնչան այս թեման բավականին լայն հետաքրքրություն է ձեռք բերել, այն աստիճան, որ Թէկուրանցուց առաջ այս «մեծ ու վրդովի» նյութին վրա մենք ունինք արդեն մեր նախնյացմեն մեզի հասած առաջնակարգ արժեքով գրաբար երկու տաղեր, մին նարեկացվո վերագրված, մյուս՝ անանուն, որոնք հրատարակված են «Բազմավեպի» մեջ ատենով...», — նկատել է Զոպանյանը<sup>8</sup>:

Թէկուրանցուց հետո էլ այս հետաքրքիր և դրամատիկ նյութը իր գեղարվեստական մշակումներն է ստացել XIX դարում՝ Ֆլորերի և Օսկար Ռուալդի գրչի տակ: Հաւաքողությունը հորինել է նաև հանելուկներ՝ նվիրված Հովհաննես Սկրտչին, Հերովդիալին, Հերովդիալին<sup>9</sup>: Այնքան ադուռ է առ թեման, որ Սալոմեն անդամ երևացել է մերօրյա բանաստեղծի տենդադին ապրումներում:

Սալոմե՝, այդ դու ես, գիտեմ,  
Կյանքի պես դաժան ու ահեղ,  
Կյանքի պես շքնաղ ու ջահել,  
Սալոմե՝, այդ դու ես, գիտեմ,  
Արնամած գլուխը սրբի  
Բարափիկ ձեռքերով պահել,  
Պարել ես դարեր ու դարեր,  
Հիմա էլ պարում ես իմ դեմու:

Սալոմեին անդրադարձել են նաև նկարիչները: XIII դարի կիլիկյան ձեռագրերից մեկում՝ «Ութ մանրանկառիչների Ավետարանում», «Քրիստոսի ծանակման» տեսարանում պատկերված է նաև պարունի վարձակը՝ նվագածու գուսանների հետ<sup>11</sup>: Այս նույն թեմային են նվիրված նաև Գյուստավ Սորոյի մի բանի կտավը: «Սանրանկարներում, ինչեմք հայ, այնպես է բյուզանդական ու արևմտահերուպական, մեծ թիվ են կագմում Սալոմեի պարն ակնարկող պատկերները», — գորում է Հ. Հովհաննիսյանը՝ «Հայ հին

<sup>5</sup> Ֆ. Նիշշե. Այսպես խոսեց Զրադաշտը. Երևան, 1990, էջ 89:

<sup>6</sup> Հոգհաննես Թէկուրանցի. Տաղեր, էջ 162:

<sup>7</sup> Նույն տեղում:

<sup>8</sup> «Անահիտ», հանդես, 1931, № 5—6, էջ 2:

<sup>9</sup> Հայ միջնադրյան հանելուկներ, աշխ. Աս. Մնացականյանի. Երևան, 1980:

<sup>10</sup> Վահագն Դավթյան. Լույս առավոտի. Երևան, 1984, էջ 210:

<sup>11</sup> Վ. Դավթյան. Սյուժետալին մանրանկարը Կիլիկիայում. Երևան, 1984, էջ 27:

դրաման և նրա պալմանաձեցը» գրքում և ավելացնում, որ միջնադարյան թատրոնի կատակերգակը «հանդես է գալիս որպես Հովհաննես Մկրտչին և Քրիստոսին նահատակող պատժի գործիք (Սալոմեն իր պարով)»<sup>12</sup>, Թղթկուրանցին իր տարբեր տաղերում մի քանի անգամ անդրադարձել է այս նյութին և ապա, կարծիս շրավարարիկելով այդքանով, մի ամբողջ վիպական տաղ է նվիրել աստվածաշնչյան այս թեմային, որը տեղ է գտել 1513 թ. առաջին տպագիր «Տաղարանում», ապա հրատարակվել է Զոպանյանի կողմից՝ «Վասն սուրբ Յովհաննու գլխատման» վերնագրով<sup>13</sup>, զետեղվել է նաև «Տաղագրքում»<sup>14</sup>, Տաղը Թղթկուրանցու վիպական բանաստեղծության նշանավոր գործերից է, ուշագրության քիչ արժանացած:

«Երկու գրաբար քերթվածները»<sup>15</sup> հովակապորեն ինքնատիպ օնարերգությամբ մը կ'արտահայտեն ինչ-որ Ավետարանը կը պատմե. Թղթկուրանցի ատոր կավելցնե նոր մանրամասնություններ, որ իր վիպերգը կենդանի; Համեղ և ինքնադրոշմ կր դարձնեն, մանրամասնություններ, զոր թերկս ինք երկակայած է, կամ հայ ժողովրդական ավանդություններե քաղած է, կամ թերկս անվավեր Ավետարաններու կամ Հայոմավորքներու մեջ գտած է, — գրում է Զոպանյանը<sup>16</sup>. Փաստն այն է, որ ինչ մենք գտնում ենք Ավետարանի մեջ (Մատթէոսի, Գլ. ԺՂ, 1—2), սեղմ ու անդամուլճ մե պատմություն է, որը ամբողջության առումով լի համապատասխանում Թղթկուրանցու տաղին: Ավետարանական պատումը սկզբնաղբյուր՝ է Անանուն հեղինակի տաղերի համար, մինչդեռ Թղթկուրանցու տաղը շատ ավելի հարուստ է գործողություններով, հետաքրքիր մանրամասնություններով: Պարզվում է, որ Թղթկուրանցու համար իրեն սկզբնաղբյուր ծառայել է ոչ թե Ավետարանը<sup>17</sup>, այլ Հայոմավորքը<sup>18</sup>:

Հովհաննես Մկրտիչը հանդիմանում է «գալիխացի շորրորդապետ»: Հերովդեսին իր Փիլիպոս եղբոր կնոշ հետ ամուսնալու համար: Հերովդեսը ցանկանում է սպանել Հովհաննես Մկրտչին, բայց նոր փառքն ու հեղինակությունը կաշկանդում են: Հերովդեսին: Սակայն կանացի յարությամբ և ոխակալությամբ յցկած Հերովդիան պահանջում է Հերովդեսից: «Առու ինձ է հատ զգուշին Ցովհաննու և դադարեցո՞ ի մէջն զյանդիմանիշ ձայն նորաւ: Պատասխանի ետ Հերովդիս և ասէ ցհոմանին դիւաց՝ ոյ հշխեմ առնի ոյցո, քանզի ար սուրբ և արդար է նա, գուցէ հուր իջուցանէ ի վերա մեր որսէս և առարն եղիա և կիղեաց զսուր ՃՇ (150) զոռականսի: Պատասխանի ետ մայրագնացն և ասէ ցհոմանին իւր՝ եթէ դժովաննէս ո՛չ սպանաննես՝ ես ոնր քիւ ար ո՛չ եղէս»<sup>19</sup>: Սուրբ Հովհաննեսն էլ Շեհսպիրի Համբատի նման կարող էր հանդիմանի Հերովդիալին:

Թուլություն, անունը կին Է...20.

Սակաւուն Հերովդեսի բանտարկած Հովհաննեսին սպասում էր կանառ Խորամանկության շաբ վերջարանը: Հերովդեսի ծննդյան օրվա կապակցու-

13 Հ. Հովհաննի սպան. Հայ հին դրաման և նրա պայմանաձեցը. Երևան, 1980, էջ 132—133:

14 «Անահիտ», 1981, № 5—6, էջ 3—7:

15 Հովհանն Բլկուրանցի. Տաղագիրը. Երուսաղեմ, 1058, էջ 8—11:

16 Խորրու Անանուն հեղինակի տաղերի յասին է:

17 «Անահիտ», 1981, № 5—6, էջ 3:

18 Հայ դասական քննարկություն. Հ. 2, Երևան, 1987, էջ 328:

19 Թղթկուրանցու այս տաղի համար իրեն սկզբնաղբյուր Հ. Հովհաննիսյանը «Հայ միջեաղարդան թատրոնը» գրքում (էջ 222) նշում է Հովհանն Ոսկեբերանի՝ Մատթէոսի ամիստարանի մեկնությունը: Մինք կարծում ենք, որ հիշյալ աղբյուրի ազդեցությամբ է ձևավորվել հովհագությին պատումը, որից էլ անմիջականորեն օգտվել է Թղթկուրանցին:

20 Գիրք որ կոչի Այսմաւուրը. Կ. Պոլիս, 1730, էջ իւ:

21 Վ. Շերսպիր Երկեր. Հ. 1, Երևան, 1964, էջ 20:

թյամբ խրախճանք է կազմակերպվում: «Եւ իբրև լըւաւ Հոօդիադա, ուրախացա, յոյժ և գարդարեաց զդուստրն իւր երեւելի զարդուք և ամենկին դիւանման պճնեալ խենեշացոյց զնա: Եւ ասէր ցդուստրն, մօրս որդի, այսօր զուարձաւի կաքաւելով քո՝ հանգո՛ զսիրտ իւր: Այս է ժամ լոեցուցանելոյ զհանդիմանի ձայն նորա ի մէնց և խնուլ առեամբ զբերանն որ չանայր զմեզ ծաղը ու նախատինս առնել յերկրիս դալիլացոց: Եւ ասէր աղջիկն ցմայրն իւր՝ նիստ լրջմտութեամբ և հանդո՛ զսիրտ ըու: Զի ես այսօր հատանեմ զհասակն որ սնտւ յանապատին: Եւ եղէց սուսէր և սպանից զթովաննէս: Նի՞ստ. մա՛ր իմ, և ուրախացիր այսօր, զի ես լցից զինդութիւն սրտի քոյ», — գրում է Հայսմագուրքը<sup>21</sup>: Խսկ Թլկուրանցին ինքնատիպ բնարերգությամբ վերապատմում է ալս հատվածը.

Ոխացաւ բնդ Ցովաննու, տարաւ ի բանտն ի յարգելարան,  
Աւր մի պատի տայր իշխանաց, յաւր ծնրնդեան իւր կորըստեան:  
Անըզգամ կինըն լրսեց, զդուստրն շինհց դիւաց դարան,  
Զծամն եւ զվարսէրըն յաւրինեց, կամարաձեւ զարմանական:  
Զաշքն եւ զուներըն թրիացոյց, զերեսն աւծեաց զեղ դիւական,  
Բոլոր ըգանձրն զարդարեց, շինեաց դիւաց ճոխ ճեմարան<sup>22</sup>:

Գինովցած Հերովդեսը Հրապարակ է կանչում Հերովդիայի աղջկան՝ Սալոմեին, որը ներկայանայով «եռկիր եպագ թագաւորին և գերեաց ըզմիտու ամրոխին: Կայթեաց ձեռօքն և սկսաւ կաքաւել: Ապշեցու յո զթագաւորն զեղեցկութեամբ, և լկտի կաքաւելուն յիմարեցոյց զնա»<sup>23</sup>: Թլկուրանցին այս տեղ է, որ դրսկորում է իր տաղանդը և պատկերում Սալոմեի պարը, որի նկարագրությունը բացակալում է ավետարանական պատումում և պատկերման արվեստով չի համսկատախանում նաև հայսմագուրքային պատումին:

Գնաց մտաւ պիղծն ի ժողովն, հոն որ իշխանքն կուտեցան,  
Զվիղն կեռեց քան զքարբի աւձ, զմէշըն ոլորեց քան զալեղան:  
Աշօք և ունօր խնճով նայէր, բաղուկ ձգէր քան զուռ ճօճան,  
Զոտքն առեալ մանիւ ճեմէր, ի լեղէհոն զօրքն ի նման<sup>24</sup>:

«Պոռնկութեան ախտով» հմայված, հիմարացած թագավորը երդվում է, ինչ որ խնդրի աղջիկը՝ կկատարվի: Խսկ «պիղծ» աղջիկը անզգամ մոր խորհրդով պահանջում է Հովհաննեսի գլուխը: Ավետարանո այստեղից հետո լուսմ է, խսկ Թլկուրանցին շատ ինքնատիպ ու հետարքիր ձեռու շարունակում է տաղր՝ հետեւելով հայսմագուրքային պատումին: Գլխատման հաջորդ օրը շոգ է լինում, և մարդիկ տեղափոխմում են սառած լճի ափու: «Եւ կոչեց թագաւորն զալիկն ի խաղալ եւ նա եկեալ Հպարտութեամբ սկսաւ խաղալ և կաքաւել: Շարժէ՛ր զպարանողն և զամենալն անդամն մարմնոյն և ճօճէր ի խաղալն իրում և եկն կաքաւելու մինչեւ ցեղոն շոուն սառուցելոյ և կամէռ եւանել կօշիքն ի վերա սառինն: Եւ հպարտութեամբ ի վերա լճին կամեցեալ երեւելի իրս ցուռանել թագաւորին և բազմականազ նորին: Եւ զի ո՛չ հանդուրժեց սառն բառնալ զանմանցութիւն նորաւ Ալլ հերձաւ սառն ի ներքոյ ոտից նորաւ և ընկուուցաւ ի ցուռն պղծութիւն նորսւ և սառն իբրի սուսեր եհար սարուխն և ընկումեզաւ ի խորս ծուու պղծաւիո մարմին նորա», — ավետարանի պակասու լրացնում է Հայսմագուրքը: Այստեղ արդեն ակնհայտ է դառնում: որ Թլկուրանցին օգտվել է հայսմագուրքային պատումից:

Վաղենէն այն պիղծ աղջիկն զսիր գործ շարիքն ի պաղն եհան,  
Պաղնն երաց զսիր բերանն. մեկ շուն մարմին երկու եղան:

<sup>21</sup> Գիրք որ կոչի Այսմատուք, էջ եկլ:

<sup>22</sup> Հովհաննես Թլկուր անցի: Տաղագիրը, էջ 9:

<sup>23</sup> Գիրք որ կոչի Այսմատուքը, էջ եկլ:

<sup>24</sup> Հովհաննես Թլկուր անցի: Տաղագիրը, էջ 10:

Լաշն գնաց ի կեր ձկանցն, գլուխն մնաց սառցին բերանն.  
Վասն պատճառ մարոն սքման. որ ցաւագնի խիստ զանազան<sup>25</sup>,

Հերովդիան շարություն է սերմանել, որի համար էլ պիտի կանգնի եղերական փաստի առաջ: Տեսնելով Սալոմեի գլուխը՝ նա սկսում է հայշոյել և անարգել սուրբ Հովհաննեսին: «Վասն որոյ անկաւ քար մի յօդիցն և ջառդեաց զպիդ և զանամօթ պատկեր նորա և սպան զնա: Եւ այսպես չարքն կորեան սատակեցան և բարձան ի միջոց, զի մի՛ տեսողեն զփառսն Աստուծոյ իսկ զսուրբ գլուխն Յովաննու բարձին ծառայքն անզգամին Հոռոգիադայ և եղին ի պատուհանի միում՝ ակն ունելով աշակերտացն սրբոյն՝ գալ կաշշառօք թափել զնա: Եւ յետ սատակման յկտոյն Հոռոգիադայ ի նմին ժամու փլաւ և տունն ի վերա նորա և այն եղի գերեզման պիդ մարմնոյ նորա և գլխու դստերն: Զի օրինավոր թաղման ոչ արժանացան և կորեան զկորուստն յաւիտենական»<sup>26</sup>, — այս հատվածը շատ սեղմ ձեռի այսպես է վերասկատում Թլկուրանցին:

Բերին դրին ի սկուտեղին, տարան ի մարն աղերս նման,  
Մայրն տեսաւ, յոյժ ճիշ երառ, ի վեր հայեաց դէմ ի Աստուծու:  
Հսկսաւ եւ ծուռ խաւեց, սուրբ Յովաննու շատ հայշոյեց,  
Խելքն զնաց, աչքն շլեթ, զոյն յերհացն կապուտ դարձուց:  
Զեռքն եւ ոտքն կապւեցաւ, ի յառինքն քար մի անկաւ,  
Ի վերայ պիհոյն անկեալ շարդաւ, որպէս պիդ շուն սատակեցաւ<sup>27</sup>.

Թլկուրանցին նպատակ ունի ցուցադրելու կնոջ անօրեն ու անզգամ վարր ու բարօր, որը նորություն չէ նրա պոեգիայի համար: Թլկուրանցու դործը ունի նաև իր հարցադրումներ՝ բարու և շարի պայքարը: Չարութիան ախտով բռնված Հերովդիան և իր դուստրը մնացին անգերեզման, իսկ սուրբ Հովհաննեսի գլուխը տարան բրուտի մոտ «Եւ յետ ժամանակաց տարան ու կոստանդուպոլիս և անդ կա փառաւորապէս»<sup>28</sup>:

Վիշպական այս տաղը, թերմս, ամենահաջողվածն է Թլկուրանցու Հուգեռը թեմատիկայով գրպածքների մեջ՝ ոճի ինքնատիպությամբ ու թառմությամբ, նյութի դրամատիկ բնկայումով, էպիկական վարպետութիւմբ: Ավելի շատ այս տաղը նկատի ուներ Գոպանյանը, երբ գրում էր. «Իր տաղեռու մեկ որոշ մասը բարուական, խրատարանական, իրոնական նյութերու վրա գոված են, և անոնց մեջ ալ բանաստեղծը զգացման նույն խորությունն ու ոճի ուուն սիրուն ինքնատիպությունն ի հայտ կր բերե, թեև ատոնդ ու թոնը տարբեռ ուլու, ամելի լուրջ, ժանրախոհ, մերթ թախծագին կամ մէս տիքականորեն խանդագառ...»<sup>29</sup>:

Մաշտոզի անման Մատենադարանի Ա. 5521 ձեռագրում (էօ 233-235ա) պահպանութեա, է «Գանձ Յումաննու» խորագոռով՝ Հովհաննես Մկուտեն նվիրած մի գանձ. որը ցանկում լիբադրիս է Թլկուրանցուն<sup>30</sup>. աւսպես՝

25 Նույն տեղում, էջ 11:

26 Գիրք որ կոչի Այսմատուրք, էջ եկա:

27 Հովհաննես թլկուրանցի. Տաղագիրք, էջ 11:

28 Գիրք որ կոչի Այսմատուրք, էջ եկա:

29 «Անաշխատ», 1931, Ա. 5-6, էջ 1:

30 Մինչկ այժմ Թլկուրանցու անունով հայտնի էին ընդամենը երեք գանձ, որոնք հրատարակել է Սովականը «Տաղագրում», իսկ էժ. Պիվացյանը նշում է յորս դանձ՝ առանց հրատարակելու Պիվացյանը գանձ և անվանում «Թաղագուրիտ միջտ անվանման» տաղը. որին մենք անդրագարձել ենք մի առանձին հովածածով: Թլկուրանցու անունով ևս երեք գանձ է հայտնաբերել բանասեր Պ. Խաչատրյանը, որոնց ձեռագրերը սիրով որումագրեց մեզ: Աւդ ուն ձերն են՝ «Գանձ Գրեշմակապետացն» (ձեռ. Ա. 424), «Գանձ Յարութան ի Յովաննես Թրլպաւանցոյ» (ձեռ. Ա. 5429), «Գանձ Յովաննու» (ձեռ. Ա. 5521): Այսպիսով, Թլկուրանուն անունով այժմ մեզ հայտնի են ընդամենը յոթ գանձ, որոնցից միանի մեկի ձեռագրիրը ձեռքի

«Կթ. Հովհաննու գանձ Թղթկուրանցոյ. և տաղեր յայլոց» (էջ 4բ): Զեռագորում գանձին հաջորդում են մի տաղ և մի հորդորակ, որոնց հեղինակները չեն նշված: Գանձը հոգում է «Յովանէսի» ծայրակապը: Իրեւ գանձին բնորոշ կրկնակ այստեղ կրկնվում է «ընկալ զնուէրս մաղթանաց միջնորդութեամբ նորին րղաճանաց, Աղաչեմ» աղերս-մաղթանքը:

Լինելով պատմողական-նկարագրական բնույթի ստեղծագործություն՝ գանձը հնարավորին չափ վերաշարադրում է Հովհաննես Մկրտչի գլխատման պատմությունը, թեև պատմելածնով ակնհայտորեն զիշում է վիպական տաղին: Թլկուրանցու գանձերը տաղաշափության տեսակետից բավականին տարբերվում են նարեկացու գանձերից: Նարեկացուց մինչև Թլկուրանցի գանձը ձեռք է բերել կատոնիկ հանգավորում, որը ևս, կարծում ենք, փոքրին, կաշկանդում է պատումի վերաշարագրմանը: Գանձում արդեն նկատեած է, որ սկզբնաղբյուրը ոչ թե Հայսմագուրըն է, այլ Ավետարանը (Մատթէոսի, դժ. ԺԴ): Այստեղ պատմությունը ընդհատվում է Հովհաննես Մկրտչի գլխատումով, մինչեռ, ինչպես տեսանք, Հայսմագուրում այն շարունակվում է, և պարտվում Սալոմեի և մոր վախճանով: Իհարկե, գանձը կիրառական ստեղծագործությունն է և կատարվում է սուրբ Կարապետի տոնին, որի մասին գանձի սկզբում իսկ նշվում է.

Յաւէտ քեզ փա՛ռք, փառաց թագաւոր  
և ինքնազօր հզօր զօրաւոր.  
փառք և պատի՛ւ, երկրագութի՛ն  
յարարածոցս՝ քեզ, հայր երկնաւոր,  
փառաւորեմք զորդիդ միածին  
և զնոգիդ Առոք՝ ընդ Հօրդ ահաւոր  
Յաւոր տօնի սուրբ Կարապետին՝  
ձեռնադրողին զրեղ, Տէր փառաւոր:  
Ընդ որս և մեր նոր դրուատելով  
բգերկնայնոց երգս հոգեռոր:  
Ընկալ զնուէրս մաղթանաց  
միջնորդութեամբ նորին րղաճանաց. Աղաւեմծաւ:

Այս առումով էլ գանձում՝ ուշադրություն է դարձվում հիմնականում Հովհաննես Մկրտչին և նրա գլխատման պատմությանը, իսկ մնացած կերպարները, թերեւ, ծառայում են այդ պատմության ամբողջացմանը:

Յրտարեկեալ ժողովոյն հանդէս  
և անօրէն արքայն Հերովդէս,  
յայռվ սկսան ինդրել թողութիւն:  
Մեծահառաշ ձայնիւ ողբալո՞յ  
համբուրէին գնա մեծ սիրով,  
յայնժամ եղեալ զորուխ ի սկսուեղ  
տարեալ աղջիկն մօրն մահաղեց:  
Արդ, խնայեա՛ ի մեզ, միածին,  
աղալանօք սուրբ Կարապետին.  
Թո՞ղ զարտիս մեր նեշեցիոցն՝  
Հայցմամբ սրբոյն՝ յաւորն ահագին  
Ցիշեա՛: Եւ... Չանձինս...32:

Այսպիսով, Թլկուրանցու դանձում՝ իբրև սկզբնաղբյուր, օգտագործվել է աստմածաշնչան պատումը, իսկ վիպական տաղում՝ Հայսմագուրքային սկսումը:

տակ լունենք, այդ էլ «եղեմական տնգոյնո սկսվածքով գանձն է (Ս. Ղազար, ձեռ. № 324),  
որի մասին տեղեկանում ենք Պոտուրյանի 1905 թ. «Բազմագիտ» հոդվածից:

Տ1 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 5521, էջ 233թ:

Տ2 Նույն տեղում:

Անշուշտ, Թլկուրանցու սուրբգրական հետաքրքրությունը չի սահմանափակվում միայն աստվածաշնչան այս թեմայով։ Մեզ է հասել «Տաղ Արարածոց» ընդարձակ վիպական քերթլածը<sup>38</sup>, որը Ծննդոց գրքի համառոտ մեկնության եղանակով ներկայացնում է միջնադարյան պատկերացումը տիեզերքի, կենդանական ու բուսական աշխարհի, երկնքի կառուցվածքի, օդերևույթի մասին։ Պահպանվել են նաև մի շարք այլ տաղեր՝ աղերսանքներ, որոնք ևս ապացուցում են, որ Թլկուրանցին հիմնավոր կրոնական կրթություն է ստացել։

Թլկուրանցու հոգևոր գրվածքները, ինչ խոսք, չունեն այն գեղարվեստական արժանիքները, ինչ որ սիրո և վիպական տաղերը, բայց և այնպես նորովի հարստացնում են նրա ստեղծագործությունը գաղափարական-նպակալիին հարցադրումներով։ Միջնադարյան բանաստեղծի նկարագիրը ամէլի ամրողական է դառնում, երբ ուշադրություն ենք դարձնում նրա նաև գեղարվեստական տեսակետից թույլ ստեղծագործությունների վրա, որոնք միջնադարյան հայ կյանքում ունեցել են դաստիարակչական և կիրառական նշանակություն։

<sup>38</sup> Հովհաննես Թլկուրանցի. Տաղագիրք, էջ 75—118։